## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2019թ. թիվ 62-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 2019թ. փետրվարի 11-ի նիստի արձանագրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

Հաստատել 2019 թվականին ՀՀ Լոռու մարզում իրականացվելիք «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագրերի՝ ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության, ծրագրերի իրականացման և ներկայացման ժամկետների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

22/02/2019

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. փետրվարի 21
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. փետրվարի 21-ի
թիվ 62-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ՝ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ, ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ

| հ/հ | Համայնքի անվանումը | Ծրագրի անվանումը | Ծրագրի սկիզբը և ավարտը | Տրամադրվող ֆինանսական միջոցներ /ՀՀ դրամ/ | Ծրագիրը մարզպետարան ներկայացնելու վերջնաժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ձորագյուղ | «Թիվ 1 գերեզմանատան պատի վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ» | 01.04.2019թ. - 31.05.2019թ. | 1500000 | 20.03.2019թ. |
| 2. | Լոռի Բերդ | «Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և Ագարակ, Յաղդան, Կողես բնակավայրերի պուրակների բարեկարգում և կառուցում» | 01.04.2019թ. - 01.06.2019թ. | 1500000 | 20.03.2019թ. |
| 3. | Դարպաս | «Մանկապարտեզի խաղահրապարակի կառուցման և բարեկարգման աշխատանքներ» | 01.04.2019թ. - 30.06.2019թ. | 1500000 | 20.03.2019թ. |
| 4. | Ազնվաձոր | «Գերեզմանների ցանկապատում և տարածքի բարեկարգման աշխատանքներ» | 02.04.2019թ. - 30.06.2019թ. | 1500000 | 20.03.2019թ. |
| 5. | Գեղասար | «Բնակչության սոցիալական պաշտպանության /ծիսակատարությունների և հանդիսության սրահ/ հաստատության վերանորոգում և տարածքի բարեկարգում» | 02.05.2019թ. - 31.07.2019թ. | 1500000 | 15.04.2019թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | Ալավերդի | «Ալավերդի համայնքի գերեզմանատան ցանկապատում» | 15.05.2019թ. - 15.08.2019թ. | 1500000 | 30.04.2019թ. |
| 7. | Գյուլագարակ | «Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և բարեկարգման աշխատանքներ» | 03.06.2019թ.- 30.08.2019թ. | 1500000 | 20.05.2019թ. |

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

2/21/2019

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ